զիչ արեւի տակ փայլփլող պղնձէ սաղաւարդներ:

Գաւառապետի ճառը:

Հոգիների փայտէ բահը, որի տակ հողը մնում է կարծր եւ դիմացկուն:

Բալզակը —

— Ճշդրիտ, անփոփոխ, անողոք: Գաւառը՝ մլուկ եւ ֆիլոքսերա:

* * *

Մարքսը, Էնգելսը: Լենինը եւ իր մահը:

Ուրիշ միջավայրում վեհութիւնից ոչ զուրկ այդ արժէքները՝ կապիկների ձեռքին ընկուզի նման փշրուում են: Թամաչան, փոքրիկ մարդկանց յաւակնութիւններով պճնուած, գլուխը ծռում, ուժասպառ ընկնում է փոշիների տակ: Նապոլիոնը, ենթագաւառապետութեան չորրորդ աստիճանի պաշտօնեայի բերանում, լաւաշի նման ծամուում է: Կեսարը խխունջի ձայն է հանում:

Դեռ տանելի է, երբ մեծ երկրի յետամնաց մի գիւղաքաղաքում պաշտօնական տօնը կատարուում է մեքենաբար, ծուլօրէն, բարձրից եկած հրամանը կատարելու համար: Գալիս են, խօսում են, գնում են: Բայց դաժան բան է, երբ կատակերգութեան ուղում են կրօնական հանդամանք տալ: Երբ միլիցականը ուսերի վրայ փիլոն է ձգում, երբ տուրքերի հաշուապահը առաքելութեան մասին է ճառում, եւ Զեկայի լրտեսը համամարդկային երջանկութեան շեփորն է փչում:

Մեծաբարբառ նախադասութիւնների կրակի տակ, գաւառը խլեզի նման տաքանում է եւ կարիճի նման կանգ առնում: Նենգամիտ, կեղծաւոր, նախանձոտ, նա իր ամենօրեայ լինելութիւնը լեցնում է փոքրիկ թոյնի հաբերով, ցեխերի վրայից ցատկռտելով, մտաւոր եւ հոգեկան անկումներից իսկ ազատագրուած, պարապի ծոցին օրօրուելով:

Երէկ նա չոքում էր կաթողիկոսի առջեւ, աչքը համբուրում, այսօր՝ հրացանը ձեռքին կանգնել է Լենինի լուսանկարի մօտ, ուղում է հաւատ ծախել:

Սկեպտիկ, համակերպող, վայելքի ծարաւ ու դորշ այդ մտայնութիւնը վերջ ի վերջոյ զգում է իր կեղծիքը եւ որովհետեւ զգում է՝ չարանում է:

Չարանում է: Ամէն կողմը թշնամիներ է փնտռում: Խոժոռ աչքեր է ձեւացնում, նայում է, լրտեսում է: Ուզում է երեւակայել, որ ինչ որ ծածուկ դաւադրութիւններ գոյութիւն ունեն, ինչ որ մութ շարժումներ, կասկածելի մտքերի աննշմարելի արտայայտութիւններ: Մենք կրակ ու բոցի մէջ ենք աշխատում:

Իսկ հայ ժողովուրդը, որ խսկապէս դարերով պարել է կրակ ու բոցի վրայ, որ տեսել է պարսիկ, արաբ, թուրք, ռուս, տեսել է Համիտը, Ցարը —

Անցնում է՝ այսօր էլ՝ դանդաղ, ներքնապէս հանդիստ, միտքը բոլորովին ուրիշ տեղ եւ երկու մատով բարձրացնում է իր գդակը, բարեւում է, ու խորամանկ նայուածքով դիտում է հրացանը ձեռքին կանգնած երկու տիմարներին:

Այդ էլ կ'անցնի:

Վարը, Մարքսը եւ Էնգելսը, նայում են ճերմակ աչքերով:

Կոպերի տակ փռուած անրիբ այդ նայուածքը տարածուում է ամբողջ Երեւանի վրայ: Հովը սաստկացել է:

Զիւնի եղանակ է:

* * *

Պատրաստութիւններ: Մեծ պատրաստութիւններ:

Բուլվարի մօտ ամբիոն են շինում: Լենինի հրապարակում զետեղում են ապագայ արձանի հիմքերը: Փոս են քանդել, քարեր են դրել՝ աղքատիկ դերեզմանի է նմանում:

Երիտասարդ բոլշեւիկները տենդային գործունէութեան մէջ են: Վազում են: Կաչուէ ծրարներից թղթեր են դուրս հանում, արագ աչք նետում, մի վայրկեան մտածում ու նորից վազում:

Հեռաձայնները լայնացած ականջների մէջ անդադար զրնգում են: Ինքնաշարժները, բարձրաստիճան տէրերին լքել են ու դաւառի հեռաւոր անկիւնները մանր ապրանք են տանում:

Ժողովներ, ժողովներ:

Մեծ մի աղեղից նետը դուրս է պրծել, մտահոգ նայում են, ո՞ւր պիտի ընկնի:

Յեղափոխութեան արխիվի ամբողջ փոշին ամպի նման բարձրացել է եւ քրտնաթոր երեա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան